ՀՏԴ 82.09(479.243) Գրականագիտություն

ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԵՎ ՄԱՔԱՌՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԵՐԳԵՐՈՒՄ

Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *ազատագրական պայքար, ազատամարտի պոեզիա, արցախյան շարժում, ղարաբաղյան հիմնախնդիր, բանաստեղծություն, պոետ պատկեր, մետաֆոր, այլաբանություն, ենթատեքստ, հումանիզմ:*

Ключевые слова: *освободительная борьба, военная поэзия, арцахское движение, карабахская проблема, стихотворение, поэтический образ, метафора, аллегория, мотив, гуманизм.*

Keywords: *liberating fight, military poetry, Artsakh movement, Karabakh problem, poem, poetic image, metaphor, allegory, motive, humanity.*

А. Григорян

Философия гуманизма и борьбы в арцахских освободительных песнях

В данной статье литературовед Амалия Григорян обратилась к национально-освободительным произведениям арцахских писателей, в частности, Мовсеса Яхшунца и Юрия Саакяна. Автор научно проанализировала основные произведения писателей на военную тематику и пришла к интересным заключениям. Свои литературоведческие исследования и наблюдения Амалия Григорян провела на фоне как армянской, так и русской и зарубежной литературы.

A.Grigoryan

The Philosophy of Humanism and Struggle in the Artsakh Liberation Songs

In the article literary scholar Amalya Grigoryan refers to Artsakh writers' national liberation works, particularly, Movses Yakhshunts' and Yuri Sahakyan's works. The author conducts scientific analysis of writers' main works on military themes and comes to interesting conclusions. The literary researches and observations are conducted on the background of the Armenian, Russian and foreign literature.

Այս հոդվածում գրականագետ Ամալյա Գրիգորյանը անդրադարձել է Արցախի գրողների և, մասնավորապես, Մովսես Յախշունցի և Յուրի Սահակյանի ազգային-ազատագրական պայքարն արտացոլող ստեղծագործություններին: Հեղինակը գիտական վերլուծության է ենթարկել հեղինակների պատերազմական թեմայով գրված գլխավոր երկերը և կատարել հետաքրքիր եզրահանգումներ: Իր գրականագիտական հետազոտություններն ու դիտարկումները Ամալյա Գրիգորյանը կատարել է ինչպես հայ, այնպես էլ ռուս և համաշխարհային գրականության ընդհանուր համապատկերում:

Ազգի մտավորականը՝ լինելով ժողովրդի տրամադրությունների ու իղձերի արտահայտիչը, ազատագրական պայքարի բոլոր փուլերում էլ հայտնվել է իրադարձությունների կենտրոնում: Նա հանդես եկավ ոչ միայն որպես ժողովրդական արդար ցասման ու ընդվզումների գաղափարախոս, այլև՝ ընթացք տվեց պայքարին: Այս առումով անգնահատելի դերակատարություն ունեցան խորհրդային տարիներին այլասոսի ճանաչված այնպիսի գրողներ, ինչպիսիք են, ասենք, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը... Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողբը» հանճարեղ բանաստեղծությունը կոմունիստական գաղափարներով կաղապարված իրականության մեջ պայթեց ռումբի նման՝ միանգամից փոխելով մթնոլորտն ու մարդկանց հայացքները, պարզեց դառը ճշմարտությունը: Ճիշտ է, այն պարբերական մամուլում կամ գրքերումչէր տպագրվում, բայց ձեռագիր վիճակում ձեռքից-ձեռք էր անցնում, ուսանողության միջոցով հասնում Արցախ, Սփյուռքում տարածվում՝ ավելի հաճախակի դարձնում նրա հեղինակի տնային կալանքները խորհրդային իշխանությունների կողմից: Դա մեր դժվարին պատմության մեջ այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ իսկական հայրենասիրությունը դիտվում էր որպես հայրենադավություն, երբ ճշմարիտ խոսքի հեղինակներին ենթարկում էին հալածանքների ու անասելի կտտանքների: Սակայն Շիրազի բարձր ժողովրդականությունը նրան փրկում էր իշխանական ծայրահեղ գործողություններից: «Ղարաբաղի ողբը» մեր քնարերգության պատմության մեջ Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Զեյթունյան երգեր»-ից, Միքայել Նալբանդյանի «Ազատություն» մոնումենտալ բանաստեղծությունից հետո կազմում է մի գեղեցիկ երրորդություն, այն միանգամից բացեց միլիոնավոր մարդկանց ստով ու կեղծիքով շղարշված աչքերը, մթնոլորտը փոխեց.

Ղարաբաղը մորս կանչն է,
Ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է,

Կարմիր, բայց սև ունի սրտում[1]:

Ղարաբաղը Ադրբեջանին բռնի կերպով կցվելուց հետո, Հովհաննես Շիրազն առաջին անգամ գեղարվեստական այսպիսի բարձր մակարդակի խոսքով անդրադարձավ ղարաբաղյան հիմնախնդրին, ըմբոստացավ անարդարության դեմ, ազատասիրական իր գաղափարների շուրջ համախմբեց ամբողջ հայությանը: Նա այնպիսի պատկերներով ամրագրեց ճշմարտությունը, որ մի ամբողջ խորհրդային երկրի պետական մեքենա չկարողացավ անգամ առարկություն գտնել: «Ղարաբաղը մորս կանչն է »... Եվ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, թե մայրական սերն ինչպիսի մեծ ու էական նշանակություն ունի մեծ պոետի համար (մանավանդ՝ նրա համար մայրը պատկերն է մայր հայրենիքի), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի խորքովու վեհությամբ է բանաստեղծի կողմից բարձրացված Ղարաբաղը մայր Հայաստանին վերադարձնելու հարցը: Եվ որքան էլ հույսը լինի «տրտում», այնուամենայնիվ, այն հորդորում ուկոչում է խիզախման: Հիրավի, մեծ հերկերի սերմնացան է Հովհաննես Շիրազը, որի գաղափարները ոչ միայն ծլեցին մարդկանց սրտերում ու մտքերի մեջ, այլ արգասավորվեցին, տվին իրենց ցանկալի պտուղները: Հայկական ժողովրդական իմաստությունն ասում է՝ այն, ինչխոսքն է անում, աշխարհում այլ մի ուժչի կարող կատարել:

Ազգային ազատագրական պայքարի գաղափարները, բնականաբար, նորովի էին արձագանք գտնում Արցախում, ծիլեր տալիս հոգևոր դաշտում: Անշուշտ՝ նաև գրողների շրջանում: Եվ՝ ոչ միայն Մովսես Յախշունցն ի սկզբանե հայտնի էր Արցախում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության լավագույն մասնագետներից մեկը: Սակայն շուտով նա հայտնվեց ազերական անվտանգության աշխատողների ուշադրության կենտրոնում: Պատճառը՝Մովսես Յախշունցը գրում է բանաստեղծություններ և այն էլ՝ ազգային (ազերիների բնորոշմամբ՝ նացիոնալիստական) բնույթի: Եվ պատահական չէ ամենևին, որ երբ սկսվեց արցախյան ազատագրական շարժումը, առաջիններից մեկը Շուշիի բերդում հայտնվեց արդեն պատկառելի տարիքի հասած (ութսունամյակին մոտ), տենդությունը գրեթե կորցրած մանկավարժ բանաստեղծը, որը ոչ միայն գեղարվեստական խոսքով, այլ գործով ևս մասնակցում էր շարժմանը՝ իր տղաների հետ, ամբողջ ընտանիքով: Ի դեպ, նրա որդուն՝ արձակագիր ու բանաստեղծ Էդվարդ Սաֆարյանին ևս երկար ժամանակ կտտանքների ենթարկեցին Բաքվի բանտերում: Միայն գրողներ Սիլվա Կապուտիկյանի և Զորի Բալայանի միջամտությունն օգնեց, որ, Մոսկվայի միջոցով, բանտից ազատվի Մ. Յախշունցը:

Ազերական կարգերն ու բարքերն արցախցուն չէին կարող բավարարել, դրանք խեղում էին իրականությունը, մարդկանց ճակատագրերը, մղում ստրկության: Ահա թե ինչ է գրել այդ մասին Մ. Յախշունցն իր «Մի կյանքի պատմություն» բանաստեղծության մեջ:

Բայց իմ կյանքի վրայով
Մի թուրք անցավ անողոք,
Եվ ինձ տրված շնորհին
Ես մնացի անհաղորդ[2]:

Բանաստեղծի «իմ կյանքի վրայով» պատկերի մեջ խտացված է ոչ միայն մեկ անհատի, տվյալ պարագայում՝ հեղինակի, այլ ամբողջ Ղարաբաղ աշխարհի կերպարը: Բաքուն ամեն ինչ անում էր ղարաբաղցու ձայնը խլացնելու, նրա աստվածատուր շնորհներն ի չիք դարձնելու, ոչնչացնելու համար: Եվ իր հող ու ջրին, իր աստվածային աշխարհին նվիրված մարդը չի կարող չըմբոստանալ: Նրա խոստովանությունն անգամ ընդվզում է դիտվում ազերիների կողմից. «Նախ քեզ, հայրենի հող իմ, Ապա՝ Աստծուն եմ պաշտում»[3]: Սա ոչ միայն պարտքի զգացողություն է, ինչպես ասում են, այլ բնական օրինաչափություն: Հասկացություններ, որոնք, ի վերջո, ներդաշնակված են մեկ միասնական գաղափարի մեջ՝ անկախ նրանից, թե ինչպես դրանք կմեկնաբանվեն այս կամ այն մտածողի կողմից: Այսպիսի հետաքրքիր դիտարկումներ ունի գերմանացի իմաստասեր Շտայներ Ռուդոլֆը. «Մարդն ազատ է միայն, եթե իր կյանքի ամեն մի ակնթարթին ի վիճակի է հետևելու ինքն իրեն: ... Ազատությունից կատարված գործողությունը՝ոչ թե բացառում է բարոյական օրենքները, այլ ներառում դրանք: Միայն թե այդ գործողությունն ավելի բարձր է կանգնած սոսկ օրենքների կողմից թելադրված գործողությունից: Ինչու պետք է սիրուց կատարված իր գործողությունն ավելի քիչ ծառայի համընդհանուր բարօրությանը, քան գործողությունը, որ կատարել եմ միայն այն պատճառով, որովհետև համընդհանուր բարօրությանը ծառայելը ես ընկալում եմ որպես պարտք: Սոսկ պարտքի հասկացությունը բացառում է ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, որովհետև չի կամենում ընդունել անհատականը, այլ պահանջում է վերջինիս

[1] Մուրադյան Ս., Հովհաննես Շիրազ, գիրք Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 253:
[2] Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիթ Պրինտ, Երևան, 2007, էջ 14:
[3] Նույնտեղում, էջ 131:

ենթարկումը համընդհանուր որևէ նորմի: Գործողությունների ազատությունը մտածելի է միայն էթիկական ինդիվիդուալիզմի դիրքից»[1]:

Ազատության, պարտքի ու գործողությունների մասին Յաշխունց գեղագետն ունի իր սեփական մոտեցումները, որոնք լավագույն արտահայտություն են գտել նրա պոեզիայում, առավել ևս՝պատերազմական թեմաներով գրված գործերում: Այս առումով հատկանշական է բանաստեղծի «Օրհներգ» բանաստեղծությունը, ուր նա միասնականության կոչ է անում հայ ժողովրդին, հորդորում՝ անվեհեր մնալ ազատության ու անկախության համար պայքարում, որովհետև փրկությունը միայն ու միայն «ինքնիշխան մեր նոր պետության» մեջ է տեսնում.

Ազատված ընդմիշտ կապանքներից հին՝
Յուրաքանչյուր հայ կքայլի առաջ,
Կանցնի այն ուղին, երկար, դժվարին՝
Իր բաժին բեռը ուսերին առած:

Եվ աստղապատկան մեր Մասիսները
Մեր սրտերի մեջում եր դրոշին
Կտանենք առաջ՝ հիշելով մի բան,
Որ դեռ աշխարհում ուժն է որոշիչ[2]:

Ձնայած երկիրը «թուրքերով շրջապատված, զորքերով շրջապատված»[3] է, բայց գրողը միշտ լավատեսորեն է մոտենում Արցախի հիմնախնդրին ու իր տրամադրությունը հաղորդում զինակիցներին, որովհետև իր ազգի ու Արցախի հաղթանակը տեսնում է հայոց քաջերի մեջ: Նա գտնում է, որ ինչքան էլ «գոռերով շրջապատված, գելերով շրջապատված» լինի Արցախը, մեկ է՝ չի պարտվի, որովհետև ապավինում է ինքն իր ուժին, իրներքին հզորությանը, որը անկոտրելի է, որովհետև արդարության համար է կռվում.

Քաջանց երկիր, փոքր ածու,
Բարձրագնա դու իմ Արցախ,
Քո անունն է մակընթացվում
Դեպի ափը արդարության[4]:

Բանաստեղծն անդրադառնալով Մովսես Խորենացուց մեզ հասած բավականին դիպուկ և իմաստուն արտահայտությանը՝ «փոքր ածու», միաժամանակ մեր նախնիների կատարած սխրանքների մասին է հիշեցնում. «Որովհետև մենք թեպետ փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»[5]:Պոետը հաստատում է, որ ինչքան էլ դժվարին է եղել մեր ճանապարհը պատմության քառուղիներում, այնուամենայնիվ,մենք հաղթահարել ենք այն, քանզի և մեր գործն է արդար, և նպատակը՝ վեհ. «Թող չլինենք մենք հուսահատ»: Գրողի յուրաքանչյուր հարցականի մեջ անգամ՝ կոդավորված բարձր հավատով, կա նաև պատասխան.

Գերության մեջ այս բռնադատ,
Հայահալած ու հայաջինջ,
Ոնց մնացիր դու այնքան դար
Հայապատկեր ու հայաջիղ:

Խոսելով, հիրավի, մեր գրականագիտության մեջ դեռևս ի՛ր արժանի գնահատականը չստացած բանաստեղծ Մովսես Յաշխունցի մասին, մեր գրողներն ու գրականագետները փորձել են անսխալ ձևով տալ նրա պոետական նկարագիրը: Եվ յուրաքանչյուրը տեսել է իր Յաշխունցին: Արձակագիր Մկրտիչ Սարգսյանը բանաստեղծի կերպարում առանձնացրել է բնապաշտությունը («Մովսես Յաշխունցն արցախցի է և նրա պոետական սերը բնապաշտությունն է»[6]): Գրականագետ Զավեն Ավետիսյանը համաձայն է արձակագրի տված գնահատականին, միայն թե ունի իր հավելումը. «Յաշխունցը բնապաշտ է բառիս ոչ փիլիսոփայական իմաստով, այլ դրանից դուրս, իբրև բնության մարդ, բնության անվախճան ձայնն ունկնդրող, նրա անքնին դաշնության խորհուրդը որոնող բանաստեղծ»[7]: Գրող Վարդան Հակոբյանը՝ խոսելով Մովսես Յաշխունցի պոեզիայի մասին, շեշտը դնում է նրա ազգային-ազատագրական շարժմանը նվիրված գործերի վրա, նրան ներկայացնում որպես մարդ-բանաստեղծ.

[1] Շտայներ Ռ., Ազատության փիլիսոփայություն, Սարգիս Խաչենց, հրատ., Երևան, 1998, էջ 113:
[2] Յաշխունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիթ Պրինտ, հրատ., Երևան, 2007, էջ 229:
[3] Նույն տեղում, էջ 241:
[4] Նույն տեղում, էջ 234:
[5] Խորենացի Մ., Պատմություն Հայոց, Հայաստան, հրատ., Երևան, 1968, էջ 70:
[6] Յաշխունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիտ Պրինտ, Երևան, 2007, էջ 306:
[7] Նույն տեղում, էջ 320:

«Յախշունցն արցախյան համազգային շարժման ակունքներում էր իր տողաներով, գերդաստանով, տնով, շենով ու բանաստեղծությամբ»[1]: Իհարկե, տարբեր անդրադարձներում մոտեցումները տարբեր են, բնականաբար, բայց կարևոր մի խնդրում բոլորը նույն «կետին են խփում»՝ ընդգծելով Արցախին, իր ժողովրդին, հանդ ու քարին նվիրված մարդու և պոետի կերպարը: Իսկ ահա գրողՍաղաթել Հարությունյանն իր խոսքում փորձում է ամփոփել բոլոր կարծիքները. «Յախշունցի խորաթափանց մտքերն ու համեմատությունները, զարմանալի մետաֆորները հաճախ դուրս են պրծնում նրա համեստության կաշկանդող զսպաշապկից, ցույց տալով, որ մենք գործ ունենք իր սեփական աշխարհն ունեցող իսկական տաղանդի հետ:

Յախշունցը նորարար է բառի իսկական իմաստով: Նրա նորարարությունը ցուցադրական չէ՝ տեսնեք, թե ինչեր կարող եմ անել: Յախշունցի նորարարությունը օրգանական է, բխում է նրա էությունից և հաճախ այնքան աննկատ է, որ դա քչերն են նկատում, իսկական հասկացողները միայն: Նոր է մտածողությունը, նոր են պատկերները և հանգերը: Համո Սահյանը ճիշտ էր ասում՝ նրան շատ է խանգարել հեռավոր, Աստծու կողմից մոռացված մի գյուղում ապրելը՝ հեռու գրական շրջանակներից, ասուլիսներից և վերջապես՝ հրատարակվելու հնարավորություններից: Նա այն մարդկանցից չէր, որ նամակներով ռմբակոծեր խմբագրություններն ու հրատարակչությունները, բայց լավ է իմացել իր և իր ստեղծած գործերի արժեքը»[2]:

Ականավոր գրականագետ Սերգեյ Սարինյանը բարձր գնահատելով Մովսես Յախշունց մարդու և բանաստեղծի գործունեությունը, գրել է.«Գիտեմ չափազանցության սահմանը, բայց չեմ վարանում Օշականի արտահայտությամբ հավաստելու, որ Յախշունցը «իրավ բանաստեղծ է», և բանաստեղծ է ոչ թե ինքնուսի բանահյուսական հանգով, այլ հասկացության դասական ըմբռնմամբ»[3]:

Այո, յուրաքանչյուր ճշմարիտ բանաստեղծ իր կյանքով ու ճակատագրով ոչ միայն մասնակիցն է դառնում իր ժողովրդին վիճակված ուրախությունների ու ցավերի, այլ լիովին կիսում է դրանք, ավելին, պայքարի մեջ է մտնում հանուն ազգի վաղվա, նրա պայծառ ապագայի: Եվ այս տեսանկյունից եթե մոտենալու լինենք, ապա պիտի խոստովանենք, որ արցախյան գոյամարտը մի նոր փորձաքար էր, որցույցտվեց, թե ազատագրական շարժման ազգային ավանդույթներն ինչպես կարող են մարդկանց մղել նոր սխրանքների ու հերոսական գործերի՝ թե գրչով, թե զենքով:

Արցախյան համազգային շարժումն առանձնացավ մեր պատմության մեջ մի կարևոր ու էական կողմով ևս, այն իր մեջ ընդգրկեց յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ ծագում էլ նա լիներ, ամբողջ հայությանը, ժողովրդին: Եվ, անշուշտ, պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ հենց դա է: Անվանի բանաստեղծ Յուրի Սահակյանը, որբ ուտխուր մանկությունից ի վեր, հաստատվել էր մայր Հայաստանում: Սակայն նրա արյան բջիջներում, ինչպես ասում են, միշտ խոսում են ծննդավայր Արցախն ու արցախցին: Եվ օրինաչափ է, որ ազատագրական շարժման գաղափարախոսներից մեկն էլ, «էն գլխից», դարձավ հայ մանկագրության մեջ արդեն անուն հանած պոետ Յուրի Սահակյանը: Այսպես, անցյալ դարի վաթսունականներին, երբ քաղաքական «ձնհալ» էր սկսվել խորհրդային երկրում, ծնունդ առավ Յուրի Սահակյանի «Մի քնեք, տղաներ» բանաստեղծությունը, որը սթափության ու պայքարի կոչ էր փաստորեն և իր տողատակերում ավելի շատ մտքեր էր պարունակում, քան բառերի մեջ: Զարթուցիչի առաքելություն էր ստանձնել այդ բանաստեղծությունը: Եվ ահա մի օր, ինչպես վկայում են ականատեսները, բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանը, երբ սկսվել էին առաջին հանրահավաքները, շարքերի առջևից ընթանում էր երգի վերածված այդ բանաստեղծությունը շուրթերին, իսկ ընկերները՝ միանալով մեկը-մեկին, ձայնակցում էին.

Հեքիաթում որոշ են Չարը և Բարին:
Հեքիաթի վերջումմիշտ հաղթում է Բարին:
Հեքիաթը հավատ է պատմողի համար.
Չքնեք, տղաներ, չքնեք,
Կյանքը ձեր նոր ընթացք կունենա:
Չքնեք, տղաներ, չքնեք,
Ով քնեց՝ հազիվ թե արթնանա[4]:

Այստեղ բանաստեղծը դիմում է այլաբանության՝ բանաստեղծության քսանմեկ տողի մեջ խտացնելով ամբողջ դարաշրջանի տագնապները, նա ներկայացնում է դաժան ժամանակի նկարագիրը՝ «Ով քնեց՝ հազիվ թե արթնանա»: Դա խորհրդային տիրող կարգերի ընդհանուր պատկերն է, ուր «քնելը» հավասարազոր է մահվան, որովհետև Չարն ամենուրեք է, որովհետև

[1]Նույն տեղում, էջ 326:
[2] Յախշունց Մ., Առեղծվածներ, Նահիրի, հրատ.,Երևան, 1998, էջ 8:
[3] Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիտ Պրինտ, հրատ., Երևան, 2007, էջ 315:
[4] Սահակյան Յ., Վեց գրքից, Սոնա, հրատ., Ստեփանակերտ, 2011, էջ 59:

«Զարն ունի հազար ձև ու դեմք,
Գեղեցիկ աչքեր, ժպիտներ, խոսքեր»:

Յուրի Սահակյանը կարողացել է բարձր վարպետությամբ կառուցել իր խոսքը, նոր, բոլորովին այլ իմաստով ու բովանդակությամբ բառավորել մտքերը: Եվ դա բանաստեղծի գրական բազմաթիվ հնարանքներից մեկն է: Արցախյան շարժման կարգախոսներից դարձան Յու. Սահակյանի

«Զքնեք տղաներ, չքնեք,
Ով քնեց՝ հազիվ թե արթնանա»

տողերը՝ փիլիսոփայական ենթատեքստի խտացումներով, ասելիքի բազմապիսի շերտերով ու ժողովրդական պարզությամբ, քնարական նուրբ մեղեդայնությամբ:

Բանաստեղծ Յուրի Սահակյանը, ինչպես յուրաքանչյուր հայ մարդ, իր կաշվի և հոգու վրա զգաց պատերազմի ամբողջ դաժանությունը, նրա բոլոր արհավիրքները: Եվ գրողի գրիչն արարեց նոր գործեր՝ ելած պատերազմի թեժ բովից:

Գեղարվեստական բարձր մակարդակով են գրված Յուրի Սահակյանի «Ավարայրի դաշտում», «Պատերազմ», «Այրին», «Սումգայիթ», «Զինվորը», «Կորսված շիրիմներ», «Դավաճան է նա, ովհող է զիջում», «Մասիսին նայող հայը», «Նա մեծ էր, անշուշտ՝ ծնված ցպահանջ» և այլ բանաստեղծություններ, որոնք տողերի ներքնատար շարժումներում կրում են պատերազմական գործողությունների ամբողջական նկարագիրը: Գրողի «Դավաճան է նա, ով հող է զիջում» բանաստեղծությունը, որը նվիրված է մարտնչող շահումյանցիներին, ռազմակոչի մի փայլուն օրինակ է.

Վեր կացեք, տղերք,
Զենք կապեք, տղերք,
Էսօր ուրիշ հոգս չկա մեզ համար:
Թշնամու գլխին հուր թափեք, տղերք,
Որ զորք է հանել մեր դեմ անհամար:

Երեկ Սասունն էր, Զեյթունն էր, Վանն էր,
Էսօր Արցախն է կրակների մեջ:
Թշնամին նույնն է, նույն Հայաստանն է,
Նրա համար մեր տառապանքը՝ հեչ[1]:

Բանաստեղծը հորդորում է հայոց քաջերին՝ երդվել Մռավին, Թարթառին, «ընկերներին քաջ ու նահատակ» և փրկել հողը, «դարձնել անառիկ»: Ռազմաշունչ բանաստեղծությունների մեջ արդեն նուրբ մանկագրի, քնարերգուի խոսքը մարտական հնչեղության նոր որակներ է ձեռք բերում, ոգևորում, ոգեշնչում: Եվ պիտի ասել, որ այն հոգևոր աղերսներ ունի հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Ռազմակոչ»-ի հետ, ուր Վարպետն իրխոսքն ուղղում է ժողովրդին՝ փիլիսոփայական ընդհանրացումները ամփոփելով կյանքի ուլույսիհաղթանակի ու հավերժության մեջ. դեպի ռազմի դաշտ, դեպի հերոսացում, դեպի բարձունքը մեծ Հաղթանակի:

Էյհե՜յ, լսեցեք, ձայն տվեք իրար,
Ամե՞նքդ եք ոտքի, մարդ քնած չկա՞.
Շու՛տ հագեք-կապեք զենքեր ու զրահ,
Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ,
Գոտեպնդվեցե՛ք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,
Ճառաչե՛ք ուժգին, կաղնիներ հզոր,
Խոլ վրնջացե՛ք, նժույգներ խիզախ,
Մրրիկի նման զարկեցե՛ք շեփոր,
Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի ռազմի դաշտ՝ սուրբ դրոշի տակ
Դեպի բարձունքը մահի ու փառքի,
Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հեռու[2]:

Իրադարձությունները փոխում են նաև մոտեցումները, արժեհամակարգերը,ընկալումները նորանում են,մեկնությունները կառուցվում միանգամայն այլ ելակետերի վրա: Ողբերգական ժամանակը ծնում է իր մոտեցումը՝ ցանկացած երևույթի նկատմամբ: «... Հայ գրականության գրեթե բոլոր արժեքավոր գործերը,-

[1]Նույնտեղում, էջ 146:
[2]Իսահակյան Ա. Երկեր, Սովետական գրող, հրատ., Երևան, 1987թ., էջ 194:

գրում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը,-ողբերգական իրավիճակների ու կեցության ծնունդ են... Հայ գրողը որդեգրեց ոչ թե պատերազմը, թեկուզ հաղթական, փառաբանելու,այլ պատերազմներին ոչ ասելու քաղաքականությունը, ոչ թե զինվոր-ազատամարտիկի հաղթանակները ներբողելու, այլ՝ նրա՝ հաղթանակից հետո իր երկրում որպես լուսանցքի մարդ ապրելը պատկերելու քաղաքականությունը: Ու հայ գրողը պատկերեց ոչ թե բերկրանքը, այլ ցավը, ոչ թե նվաճումը տարածքների, այլ կորուստը հազարավոր հրաշալի հայորդիների»[1]: Եվ ապա նշում է գրականագետը, թե Արցախյան ազատամարտն «այդտեսակ ընկալումների» ինչպիսի դրսևորումներ ունեցավ: Ասենք, որ այս տրամադրությունները, անշուշտ, մարդասիրական ընդհանուր հենքի վրա են մշտապես ի հայտ գալիս: Մարդասիրական նման ընկալումների ծնունդ է և Յուրի Սահակյանի հետևյալ բանաստեղծությունը.

Պատերազմներում
Ով էլ որ հաղթի,
Պատրվողըմիշտ էլ
Նույն մարդկությունն է[2]:

Բանաստեղծի փիլիսոփայությունն ունի երևույթի խորքերը բացելու միտում, որը և խնդիրը տեղափոխում է բարոյական սկզբունքների ոլորտ, այսինքն՝ այլ հարթություն: Նախ՝ առաջին հայացքից թվում է, թե Յուրի Սահակյանը հակասում է ինքնիրեն՝ մեկ բանաստեղծության մեջ ռազմի կոչ է հնչեցնում, մյուսում գտնում է, որ ով էլ հաղթի պատերազմներում, պարտվողը մարդկությունն է: Բայց երբ երևույթը ներսից ենք դիտարկում, մանավանդ՝ բանաստեղծի ենթատեքստը բացելով, տեսնում ենք, որ,ինչպես ասում են, պարտություն չէ ամեն պարտություն, ոչ էլ հաղթանակ է ամեն հաղթանակ, հայտնվում ենք հարաբերականության դաշտում: Յու. Սահակյանը «Մի քնեք, տղաներ» բանաստեղծության մեջ արդեն ամրագրել է, որ Զարի և Բարու կռիվը հավերժական է, ուրեմն, Բարու հաղթանակը հենց մարդկության հաղթանակն է: Եվ մեզ մնում է հեղինակի «պարտություն» արտահայտությունը բարոյական և հոգեբանական եզրույթներում դիտել: Այսպես, ռուս բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոն «Մի չարաշահիր» բանաստեղծության մեջ գրում է.

Ցած մի գլորվիր դեպի հաղթանակ,
Այլ վեր բարձրացիր դեպի... պարտություն:[3]

Այստեղ «պարտություն» և «հաղթանակ» բառերը, անշուշտ, օգտագործված են այլաբերական իմաստով, արտահայտում են այլ բովանդակություն և հատկանիշ:

Որքան էլ մոտեցումները տարբեր լինեն, թե՛ Եվգ.Եվտուշենկոն, թե՛ Յու. Սահակյանն ընդունում են մեկ գեղագիտական ելակետ՝ եթե պատերազմը մղվում է հանուն ազատության, խաղաղության, չարի ոչնչացման, ուրեմն, դա մարդասիրություն է, իսկ եթե կռիվ են մղում տարածքներ ձեռք բերելու, ուրիշին ստրկացնելու համար, այս դեպքում արդեն, իրոք, պատերազմը մարդկության պարտությունն է:

Պոեզիայում բառերը շատ հաճախ «իրենց վրա են վերցնում» բառարանային բովանդակության հետ չխոսող այլ իմաստներ, դառնում են նշան ու խորհրդանիշ, երբեմն բառերը կարող են լինել անգամ «առարկա» կամ «իր», իրենցով, ինչպես երաժշտության մեջ, գործիքավորել ամբողջական ստեղծագործություններ: Դիմենք Ռ. Ուելլեքին և Օ. Ուորրենին: Ահա թե ինչ են գրում նրանք. «Գրողի արտահայտման միջոցը բառերն են: ...Բանաստեղծի համար բառը ոչ թե նախապես «նշան» է, ոչ թե թափանցիկ խաղաքար, այլ՝ «սիմվոլ» (խորհրդանիշ), որը արժեքավոր է թե՛ ինքնին և թե՛ վերարտադրելու իր կարողությամբ: Բառը կարող է նույնիսկ լինել «առարկա» կամ «իր», որը հաճելի է իր հնչողությամբ կամ տեսքով: Որոշ վիպասաններ (Սկոտ, Կուպեր, Դրայզեր) կարող են բառերը գործածել որպես նշաններ, որի դեպքում նրանք շահում են այլ լեզվի թարգմանված լինելով կամ հիշվում են որպես միֆական կառուցվածք: Բանաստեղծները սովորաբար գործածում են բառերը «խորհրդանշորեն»:

Յուրի Սահակյանի, Մովսես Յախշունցի և, առհասարակ, արցախյան ազատամարտի մասին մեր գրողների գրած երգերը շնչում են խորը մարդասիրությամբ: Այս պարագայում արդեն խիզախությունն ու սխրագործությունը, մաքառումը, անվեհերությունը՝ որպես գեղագիտական յուրօրինակ կատեգորիաներ, ի վերջո, համաձուլվում են ազատասիրության ու հումանիզմի գաղափարների մեջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Ամալյա Գրիգորյան - «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարան հայոց լեզվի և գրականության ամբիոն
Էլ. հասցե՝ amaliya.grig86@mail.ru
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1]Granish.org, www.imyerevan. com:
[2]Սահակյան Յ., Վեց գրքից, Սոնա, հրատ., Ստեփանակերտ, 2011, էջ 105:
[3] Եվտուշենկո Եվգ., «Երրորդ հիշողություն», Հայաստան հրատ., Երևան, 1974, էջ 22: